ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2201-Ա « 02 » հունիսի 2025թ.

ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ, ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.60/12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Օքսանա Շարոյանցի դիմումը՝ Շենգավիթ վարչական շրջանի, Արարատյան փողոցի հ.60/12 հասցեում գտնվող շինության զբաղեցված հողամասի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2024 թվականի դեկտեմբերի 30-ի հ.30122024-01-0081 /գաղտնաբառ՝ 9GCJ56CR6HBE/ վկայականը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրանց նկատմամբ առանձին իրավունքների /սահմանափակումների/ վերաբերյալ 2025 թվականի մարտի 31-ի հ.ԱՏ-31032025-01-0431, 2025 թվականի փետրվարի 20-ի հ.ԱՏ 20022025-01-1199 տեղեկանքները, ինչպես նաև «Նեֆրիտ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից 2025 թվականի փետրվարի 6-ին կատարված տեղագրական հանույթը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ քննարկվող հասցեում գտնվող շինության զբաղեցրած հողամասի փաստացի մակերեսը չափագրությամբ կազմում է 1790.0քմ, որը համապատասխանում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.30122024-01-0081 վկայականում ամրագրված հողամասի մակերեսին, սակայն գործող կադաստրային քարտեզում քննարկվող հողամասի մակերեսը կազմում է 1791.40քմ, ինչպես նաև առկա է հողամասի տեղադիրքի շեղում:

Քննարկվող՝ 1790.0քմ մակերեսով հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 8-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի

աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2025 թվականի ապրիլի 25-ի հ.Ն/22098-25 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Շենգավիթ վարչական շրջանի, Արարատյան փողոցի հ.60/12 հասցեում գտնվող շինության զբաղեցրած հողամասի սահմանները որոշվում են 1790.0քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի և Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահավում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ